ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արմաշ համայնք
ՀՀ, Արարատ մարզ, գ.Արմաշ, (0234)60051,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 22

ԱՎԱԳԱՆՈՒ 5-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ կետով.

Ավագանին որոշում է հաստատել 5-րդ նիստը հետևյալ օրակարգով.

1. Արմաշ համայնքի ավագանու 12.04.2016 թվականի թիվ 20 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

2. Արմաշ համայնքի սեփականություն հանդիսացող գույքից առանձնացնելու և օտարելու մասին

3. Համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին

4. Ավտոգույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին

5. Արմաշ համայնքի 2016 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՁԵՅՆԱԼՅԱՆ ՌՈԲԵՐՏ կողմ
2. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ կողմ
3. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ կողմ
4. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՄԱՆՈՒԿ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ՁԵՅՆԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արմաշ համայնք
ՀՀ, Արարատ մարզ, գ.Արմաշ, (0234)60051,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 23-Ն

ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 12.04.2016 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 20 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով.

Արմաշ համայնքի ավագանու 12.04.2016 թվականի թիվ 20 որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի ,,0777-ի 0001-ից,, ծածկագիրը կարդալ ,,0757-ի 0001-ից,,

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՁԵՅՆԱԼՅԱՆ ՈՍԲԵՐՏ կողմ
2. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ կողմ
3. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ կողմ
4. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՄԱՆՈՒԿ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ՁԵՅՆԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արմաշ համայնք
ՀՀ, Արարատ մարզ, գ.Արմաշ, (0234)60051,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 24-Ն

ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ և ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջով.

Թույլատրել համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով առանձնացնելու և աճուրդ-վաճառքով օտարելու համայնքի սեփականություն հանդիսացող՝

1. 0126-ի 0004-ից 0.47137 հա արոտավայր

2. 0034-ի 0002-ից 0.04584 հա գյուղատնտեսական արտադրական

3. 0158-ի 0004-ից 0.10319 հա այլ

4. 0186-ի 0034-ից 0.13696 հա արոտավայր

5. 0219-ի 0001-ից 0.06322 հա ջրային

6. 0237-ից 1.55852 հա արոտավայր

7. 0240-ի 0042-ից 0.21023 հա այլ

8. 0176-ի 0001-ից 1.66827 հա վարելահող

2. Հողերի օտարման մեկնարկային գինը սահմանել հողի կադաստրային արժեքի 100%-ի չափով:

3. Աճուրդի կամ օտարման գործընթացը ավարտել 2016 թվականի 3-րդ եռամսյակում

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՁԵՅՆԱԼՅԱՆ ՌՈԲԵՐՏ կողմ
2. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ կողմ
3. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ կողմ
4. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՄԱՆՈՒԿ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ՁԵՅՆԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արմաշ համայնք
ՀՀ, Արարատ մարզ, գ.Արմաշ, (0234)60051,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 25-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 16-րդ հոդվածի 28-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության04.06.2015 թվականի 680-Ն որոշման հալելվածով

Հաստատել համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2015 թվականի 680-Ն որոշման հավելվածի (կցվում է)

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՁԵՅՆԱԼՅԱՆ ՌՈԲԵՐՏ
2. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ
3. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ
4. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ՁԵՅՆԱԼՅԱՆ

Հավելված N 1
Բնակավայրերի տարածքների
գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության,
համաձայնեցման,
հաստատման և փոփոխման կարգի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ

Սույն կանոնադրությամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արմաշ համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները՝ ելնելով համայնքի պատմականորեն ձևավորված ավանդույթների և պատմաճարտարապետական միջավայրի պահպանման անհրաժեշտությունից:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, որպես կանոն, մշակվում և հաստատվում է գոտևորման նախագծի կազմում՝ հավելվածի տեսքով:

1.2. Համայնքի ավագանու որոշմամբ քաղաքաշինական կանոնադրությունը կարող է մշակվել նաև մինչև գլխավոր հատակագծի և (կամ) գոտևորման նախագծի մշակումը՝ որպես առանձին փաստաթուղթ: Այս դեպքում կանոնադրությունը կցվում է նախագծային առաջադրանքին և պարտադիր հաշվի է առնվում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման ընթացքում:

1.3. Համայնքի ավագանու կողմից հաստատվելուց հետո քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված պայմանները ներառվում են համայնքի ղեկավարի կողմից կառուցապատողին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում՝ համապատասխան դրույթներ ամրագրելով առաջադրանքի ձևի ,Լրացուցիչ պայմաններե բաժնում:

II. ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ

(Ճարտարապետության առանձնահատկությունները և շինարարության տեխնոլոգիաները)

2.1. Համայնքի տարածքում գտնվող կարևոր շենքերի և շինությունների ճարտարապետական ոճի, կրկնվող և հաճախ կիրառվող տարրերի, ճակատների ձևավորման առանձնահատկությունների, օգտագործված շինանյութի և

կառուցման եղանակի նկարագրությունը:

2.2. Նկարագրությունը հիմնավորվում է համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

III. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

3.1. Համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների նկարագրությունը, դրանց ներկայիս վիճակը, վերականգնման ու պահպանման հետ կապված խնդիրները:

3.2. Տվյալները հիմնավորվում են պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներով, համապատասխան լուսանկարներով:

IV. ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Նկարագրվում են համայնքի տարածքում գտնվող համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող շենքերը և շինությունները, բերվում են դրանց հետ առնչվող պատմությունները, ներկայացվում են շենքերի և շինությունների ներկա վիճակը, վերականգնման և պահպանման հետ կապված խնդիրները:

4.2. Տվյալները հիմնավորվում են համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

V. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԽՐԱԽՈՒՄՎՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

5.1. Թվարկվում են այն ճարտարապետական ոճերը, հնարքները, դեկորատիվ տարրերը, ճակատների ձևավորման առանձնահատկությունները, դռների, պատուհանների համաչափությունները, շինարարական նյութերը և կառուցման եղանակը, որոնք պահպանվելու են համայնքի տարածքում և խրախուսվելու են նոր շենքերի կառուցման ժամանակ:

1. Շենքերի և շինությունների ծավալային ու ճարտարապետահատակագծային լուծումներին, ինչպես նաև դրանց առանձին մասերին ներկայացվող պահանջները

ա. շենքի մասշտաբը, ճակատային լուծումներն ու դրանք շեշտադրող տարրերը (զարդաքանդակները, շքամուտքը (պորտալը), որմնախորշերը, շվաքարանները, քիվերը, կամարները և այլն),

ըստ ճարտարապետահատակագծային (ՃՀԱ) առաջադրանքի և ներկայացված նախագծի.

բ. շենքի ճակատային մասի արտաքին բացվածքների (դռներ, պատուհաններ, ցուցափեղկեր) ձևավորումը,

ըստ քաղաքացիների ներկայացրած հայտերի, փոփոխությունների և նախագծերի.

գ. շենքի տանիքներն ու շենքերի հորիզոնական հարթությունները (հինգերորդ ճակատե), ինչպես նաև ճակտոնները (ֆրոնտոնները), մանսարդները, ձեղնանցքները, եզրապատերը (պարապետները) և այլն,

ըստ քաղաքացիների ներկայացրած հայտերի,բնակլիմայական պայմանների և շինությունների տեսակների

դ. շվաքարանները (տենտերը, մարկիզաները),

ըստ կառուցվող շենքի դիրքի և ներկայացված հայտերի.

ե. շենքի ճակատների և տանիքի հարդարման նյութերն ու երանգավորումը, արտաքին լուսավորությունը.

ըստ կառուցվող շենքի դիրքի և ներկայացված նյութերի տեսակների.

2. Փողոցների, անցումների, հետիոտն ճանապարհների ու հեծանվուղիների (ճանապարհային ցանց), հրապարակների, ներքին բակերի, շքաբակերի (կուրդոնյերների) և հարթակների կառուցվածքին ու ձևավորման ավտոկայանատեղիների կազմակերպմանը ներկայացվող պահանջները

ա. ճանապարհային ծածկույթը (նյութը, դեկորատիվ տարրերը և գունային լուծումները),

ասֆալտ, բետոնե բնական քարերից սալիկներ և եզրաքարեր.

բ. համայնքն սպասարկող տրանսպորտի համար նախատեսված կանգառների ձևավորումը,

պահանջվող չափի նստարաններ և շվաքարաններ.

գ. հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի տեղաշարժման համար անհրաժեշտ կահավորանքը (թեքահարթակներն ու հատուկ հարմարանքները՝ լուսային, ձայնային և այլ նախազգուշացման միջոցներով),

լուսային ձայնային նախազգուշացման միջոցներ, թեքահարթակներ.

դ. ֆունկցիոնալ ձևավորումը, կանաչապատումը և կահավորանքը (փոքր ճարտարապետական ձևեր կամ դեկորատիվ արվեստի նմուշներ, գրուցարաններ, շվաքարաններ, նստարաններ, շատրվաններ, դեկորատիվ ջրավազաններ, կանաչ տնկարկներ, այդ թվում՝ ադդահայաց կանաչապատում և այլն),

ըստ համայնքի գլխավոր հատակագծի.

ե. ճանապարհային ցանցին հարող պարիսպների, ցանկապատերի (այդ թվում՝ դալար ցանկապատերի) կառուցվածքին, նյութին ու ձևավորմանը ներկայացվող պահանջները.

Քարե և երկաթյա նյութեր, ըստ համայնքի գլխավոր հատակագծի.

3. Լանդշաֆտին, այգեպուրակային շինարարությանը և կանաչապատմանը ներկայացվող պահանջներ

ա. ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների և հետիոտն շարժման ակտիվ գոտիների կանաչապատումն ու բարեկարգումը (փոքր ճարտարապետական ձևեր, ջրային մակերեսներ, շատրվաններ, նստարաններ, տաղավարներ, զրուցարաններ և բարեկարգման այլ տարրեր),

շատրվաններ, նստարաններ, ճեմուղիներ.

բ. այգեպուրակային շինարարության կազմը (հենապատեր, ծառուղիներ, հարթակներ, աստիճաններ, ինչպ նաև ծառեր, թփեր, սիզամարգեր, ծաղկաթմբեր և գալարվող բույսեր, դեկորատիվ բուսական ծածկույթ, բազմա և միամյա բույսերի տեսակներ, կանաչապատման և բարեկարգման այլ միջոցներ),

խոտային ծածկույթ բազմամյա տնկարկ, աղբամաններ.

գ. անհրաժեշտության դեպքում՝ քամու դեմ պաշտպանական գոտու ստեղծման միջոցառումները (ծառատն կանաչ ծածկույթների իրականացում տեղական սովանդական տնկանյութերի տեսակներից՝ տարբեր բարձրութ բույսերի զուգակցմամբ),

համայնքի շուրջ և դաշտերում բարձր ծառատեսակների ծառատունկ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արմաշ համայնք
ՀՀ, Արարատ մարզ, գ.Արմաշ, (0234)60051,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 26-Ն

ԱՎՏՈԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Գույքահարկի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջով.

Սահմանել ավտոգույքահարկի արտոնություն Արմաշ համայնքի բնակիչներ Վալոդ Մնացականի Շահնազարյանին 17400 /տասնյոթ հազար չորս հարյուր/ դրամ և Գևորգ Վալոդի Շահնազարյանին 72000 /յոթսուներկու հազար/ դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՁԵՅՆԱԼՅԱՆ ՌՈԲԵՐՏ
2. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ
3. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ
4. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ՁԵՅՆԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արմաշ համայնք
ՀՀ, Արարատ մարզ, գ.Արմաշ, (0234)60051,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 27-Ն

ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

1. Եկամուտները ավելացնել 1774.200 դրամով

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ընթացիկ ծախսեր ֆինանսական նպատակով սուբվենցիայի պլանը սահմանել 1774.200 դրամով

2. Ծախսային մաս

,, Կառավարման մարմնի պահպանում,, գործառնական դասակարգման ծախսային ծրագրի /բաժին 1, խումբ 1, դաս 1, ծրագրի 51/ տնտեսագիտական դասակարգման 4111 հոդվածի ծախսը ավելացնել 40.000 հազար դրամով, ճշտված պլանը սահմանել 19.36000 դրամ, 4212 հոդվածի ծախսը ավելացնել 236.8 հազար դրամով, ճշտված պլանը սահմանել 736.8 հազար դրամ

,,Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման,, գործառնական դասակարգման ծախսային ծրագրի /բաժին 10, խումբ 5, դաս 1, ծրագրի 51/ տնտեսագիտական դասակարգման 4632 հոդվածի ծախսը ավելացնել 14974.00 դրամով, ճշտված պլանը սահմանել 14974.00 դրամ

Արմաշ համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացնել

1. ,,Սոցիալապես անապահով անձանց,, գործառնական դասակարգման ծախսային ծրագրի /բաժին 10, խումբ 7, դաս 1, ծրագրի 54/ տնտեսագիտական դասակարգման 4729 հոդվածին ավելացնել 100.000 դրամ, ճշտված պլանը սահմանել 2900.000 հազար դրամ

2. ,,Նախադպրոցական կրթություն,, գործառնական դասակարգման ծախսային ծրագրի /բաժին 9, խումբ 1, դաս 1, ծրագրի 51/ տնտեսագիտական դասակարգման 4639 հոդվածին ավելացնել 100.000 դրամ, ճշտված պլանը սահմանել 12860.00 դրամ

3. ,,Վարչական օբյեկտների հիմնանորոգում,, գործառնական դասակարգման ծախսային ծրագրի / բաժին 1, խումբ 1, դաս 1, ծրագրի 52/ տնտեսագիտական դասակարգման 4251 հոդվածին ավելացնել 600.000 դրամ, ճշտված պլանը սահմանել 1600.000 դրամ

4. Կրթություն /բարձրագույն/ գործառնական դասակարգման ծախսային ծրագրի /բաժին 9, խումբ 4, դաս 1, ծրագրի 51/ տնտեսագիտական դասակարգման 4729 հոդվածի ծախսը ավելացնել30.000 դրամով, ճշտված պլանը սահմանել 800.000 դրամ

5. ,, Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերություններ,, /բաժին 4, խումբ 1, դաս 1, ծրագրի 51/ ծախսային ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4239 հոդվածի ծախսը ավելացնել 460.000 դրամով, ճշտված պլանը սահմանել 810.000 դրամ

6. Վ/բ-ի պահուստային ֆոնդը սահմանել 2892.373 հազար դրամ

Կողմ -4 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ՉԵՅՆԱԼՅԱՆ ՌՈԲԵՐՏ
2. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ
3. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ
4. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ՉԵՅՆԱԼՅԱՆ